

ԳԱՐԱՍԿԶՐԻ ՌՈՒՄ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԱՀԱԿՑԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՑԱՆ

Իսահակյանի երիտասարդ տարիների ծոցատետրերից, օրագրերից ու գրառումներից երեզվում է, որ նա մշտապես ուսումնասիրել է ռուս գրականության ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից գրողներին, հետաքրքրվել է ժամանակի ռուս գրական կյանքով, գրական նոր ուղղություններով ու հոսանքներով: Նա հայ և եվրոպական հեղինակներից բացի կարգացել է նաև ռուս դասականներին, կատարել նշումներ, որոնք այս կամ այն նոր գիրքը: Գոգոլի, Պուշկինի, Տոլստոյի, Դոստոևսկու շատ գործեր նա ձեռք է բերել հենց եվրոպական քաղաքներում:

Ահա Իսահակյանի 1907 թվականի ծոցատետրերից մեկը, ուր կարդում ենք. «Մ'չ մի երկրում, ոչ մի ազգի մեջ գրականության միջոցով (Դոստոևսկի, Տոլստոյ, Գարշին և այլն) ախթան սեր չի բարոզվել, ինչքան Ռուսաստանում»¹:

Հիանալի է գտնված «քարոզվել» բառը: Իրոք, ռուս գրականության համար բնորոշ է այն, որ սերը ոչ թե նկարագրվել և կամ, ասենք, երգվել ու փառաբանվել է, այլ՝ քարոզվել: Այս բառն իր մեջ հոգեկան սկիզբ է ամփոփում՝ проповедь, проповедовать—նշանակում է ավետել, ավետարանել և, վերջապես՝ ներբողել: Ահա այս իմաստով է օգտագործում Իսահակյանը «քարոզել»-ը:

Ինչ խոսք, Իսահակյանը ռուս դասականներին ընթերցելու, կամ ռուս գրականության նորություններին ծանոթանալու առաջին լայն հնարավորություն ուներ բուն Ռուսաստանում՝ Օդեսայում (1898 թ.), Մոսկվայում (ուր բանաստեղծը մի քանի ամիս ապրել է 1904 թվականին), Պետերբուրգում, ուր մթնոլորտը հագեցված էր գրական և մշակութային հարուստ կյանքով: Պետերբուրգի Շչեդրինյան, Մոսկվայի Ռումյանցևյան (այժմ Լենինի անվան) և Լազարյան ճեմարանի հարուստ գրադարանները կրթոտ ընթերցասեր Իսահակյանի հաճախման սիրելի վայրերն էին: Նրա անձնական գրադարանում պահպանվում են բազմաթիվ գրքեր, որոնք նա 1904 թ. գնել է Մոսկվայի նշանավոր գրախանութներից: Այդ նույն թվականին գրական հանդեսներում ու երեկույթներում նա հնարավորություն է ունենում տեսնելու և լսելու դարասկզբի մի շարք նշանավոր ռուս հեղինակների: Հետագայում Իսահակյանը մի առանձին ցավով էր մտաբերում, որ Մոսկվայում գտնված ժամանակ իրեն չի հաջողվել տեսնել և Տոլստոյին:

Հիշենք, որ այդ տարիներին Մոսկվայում գործում էր Լազարյան ճեմարանը, քաղաքում կար բավական աշխույժ հայկական մշակութային կյանք, կային հրատարակչություններ ու պարբերականներ, տիրում էր հայ և ռուս առաջղեմ գործիչների հին ավանդույթներին հարազատ սերտ համագործակցության մթնոլորտ: Այստեղ, 1904 թ. գարնանն ու ամռանը նա հանդիպում է Ալեքսանդր Մատուրյանի և Կարապետ Կուսիկյանի հետ, վերջինիս տանը ծանոթանում նաև Յուրի Վեսելովսկուն:

Հետագա իր ողջ կյանքում Իսահակյանը դարասկզբի Մոսկվան միշտ հիշում էր սրտագին սիրով, որպես կյանքի սեմին իրեն հաճախ հյուրընկալած արվեստի ու գրականության մի շքեղ կենտրոն:

Անդրկովկասում և հատկապես Թիֆլիսում, որը 1905—1910 թթ. Ալեքսանդրուպոլի հետ հանդիսացավ Իսահակյանի հիմնական բնակավայրը, նա հնարավորություն ուներ ժամանակին և բավարար շափով հետևելու Ռուսաստանի գրական կյանքին, տեղյակ լինելու գրական նո-

¹ ԶԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆոնդ:

բույժներին: Քիֆիսը, որ այդ տարիներին Կովկասի հիմնական մշակութային կենտրոնն էր, սերտ կապեր ուներ Մոսկվայի և Պետերբուրգի հետ, առանց հապաղման Քիֆիս էին հասնում ուսական բոլոր պարբերականներն ու գրական նորությունները: Քիֆիսի մամուլն էլ, իր հերթին, հաճախ հրապարակում էր այն ուս գրողների երկերը, որոնք կամ մշտապես ապրում էին Կովկասում, կամ այս ու այն պատճառով գտնվում էին այնտեղ (հիշենք, թեկուզ, Մ. Գորկու անդրանիկ «Մակար Չուրբա» պատմվածքի հրատարակման պատմությունը): Իսահակյանը առանձնահատուկ ուշադրությամբ հետևում էր Ռուսաստանում երևացող գրական նոր անուններին, շանում հնարավորին շափ ծանոթանալ նրանց ստեղծագործությանը:

Ռուս ժամանակակից գրականությանը տաժաժ հոգեկան հետաքրքրությունը հաճախ դրդել է Իսահակյանին կիսել իր մտքերը ընթերցողի հետ, հանդես գալով հայ մամուլի էջերում իր համար փոքր ինչ անսովոր գրաքննադատի դերում: Մեզ հայտնի են այդ շրջանում նրա գրած երեք ծավալուն հոդված-գրախոսականներ, որոնք լույս են տեսել 1908 թ. Քիֆիսի հայ մամուլում:

Իսահակյանի գրաքննադատական հայացքները մեծ հետաքրքրություն են ներկայացնում թե իսահակյանագետների և թե հայ-ուսական մշակութային կապերը հետազոտողների համար:

Բանաստեղծի առաջին հոդվածը, որ վերնագրված է «Ռուսաց գրականությունը 1907 թվին», լույս է տեսել «Էլտակ» հայկական օրաթերթում (Քիֆիս, 1908, հունվարի 15, № 10): Սա մի փորձ է՝ րնդհանուր ակնարկի ձևով ներկայացնել 1907 թվականի ուսական գրական նորությունները և նրանց զուգահեռ ծագած նոր հոսանքները: Հոդվածի սկզբում Իսահակյանը, չթաքցնելով իր ստանձնած գործի ծանրությունը, անկեղծորեն գրում է. «Եսույն մի տարվա ուս գրականության մասին, այդ կնշանակե խոսել մի անպարունակելի քանակի մասին. ուսերեն մի տարվա ընթացքում այնքան գիրք է լույս տեսնում, որ մի քանի մարդու ամբողջ կյանք հազիվ բավի բոլորը կարդալու»:

Ով, այդուհանդերձ, Իսահակյանը փորձել է գրել եթե ոչ կոնկրետ բոլոր գործերի մասին, որոնք աշխարհ էին եկել 1907 թվականին, ապա, զոնե այն էական ու հիմնական ուղղությունների ու միտումների վերաբերյալ, որոնք երևան էին եկել 1904—1906 թթ. «հեղափոխական վերիվալյուտներին» (Իսահակյանի խոսքերն են—Ա. Ի.) ժամանակաշրջանից հետո, երբ խաղաղվել էին կրքերը և հասել էր ժամանակը իմաստավորելու համար այդ ոչ հեռավոր պատմական երևույթները: Սակայն, ինչպես նկատում է Իսահակյանը, խաղաղ օրերի ստեղծագործողները հարկ եղած շափով չեն լուսաբանում իրենց ժամանակը, երևան չեն բերում մնայուն գեղարվեստական գործեր: Հեղափոխության բուռն վերելքը տեղաշարժության շրջան էր ապրում և գրականության մեջ, ուր մտքերի ու զգացմունքների ժայռահեղ անհատապաշտական տենդենցն էր տիրողը. կոնկրետ սոցիալական գաղափարները փոխարինվում էին միասիկ ու անկումային գաղափարներով:

Իսահակյանը կարողանում է իր բանաստեղծական ներզգայության շնորհիվ իրավացիորեն ներկայացնել գրական իրականության այս «անբարձունք ու անհրաբուխ» համայնապատկերը: Նա գրում է. «Այս տարվա ուս գրականությունը գերազանցորեն մոգորելիստական-դեկադենսական է, գեղազանցորեն իմպրեսիոնիստ, ինդիվիդուալիստական է, և ներկա ուս ինտելիգենցիայի, որպիսինի հոգեբանությունը բոլոր ազգերի մեջ չբնաշարին է ամբողջ ազգի, հոգեբանության արտահայտիչը ոչ թե Տոլստոյն է, կամ Կորոլենկոն, կամ Գորկին և նույնիսկ Անդրեևը, այլ բոլորովին նոր ոգիներ Արցիբաշև, Սերգեն-Ցենսկի, Չուլկով, Գորոզցևի, Կամենսկի և ուրիշները»: «Ոգիների նոր տիրակալները» Իսահակյանի սրտով չէին. այդ նոր գրականության մեջ նա դեռևս չէր տեսնում մնայուն մեծությունների. «Սակայն այդ նոր ոգիները դեռ չեն տվել իրենց, այսպես ասած, ոգու լեռնազագաթը—իրենց Տոլստոյը, որոնք դեռ ռահվիրաներ են, ճանապարհ հարթողներ մեծը, գերազույնը, ամբողջովինը արտահայտելու համար, որը երեկ գալու է»:

Եսույնով այդ «նորերի» առաջնորդներ Մ. Արցիբաշևի («Սանին») և Ֆեոդոր Սուլցովի «Мелкий бес», «Творимая легенда» վեպերի, ինչպես նաև Սերգեն-Ցենսկու, Մուլոբելի և Կուզմինի պատմվածքների մասին, Իսահակյանը ցավով նկատում է, որ այդ գրվածքներում քարոզվում է մարմնի պաշտամունքը, սեռական անարիթմի, բարոյական իդեալներից զուրկ նրանց հերոսները ձգտում են շուրջ զգայական երջանկության, արտոլյուտ ինդիվիդուալիզմի, նրանց համար կա միայն մի աստված, մի էշմարտություն՝ «եսը»: Նման գրականությունը, գրում է Իսահակյանը, զուրկ է բարոյական սկզբունքներից, նա նպատակ չունի հետազոտելու մարդկային բնության շարի ու բարու սկզբունքները. նրա նպատակն ասելիքի արտաքին գեղեցկությունն է, ձևական կողմը: Միաժամանակ Իսահակյանը նկատում է, որ

շատ հրատարակիչներ, եվրոպական գրականությունից թարգմանական գործեր ընտրելիս, ղեկավարվում են նույն այս ղեկաղենաական տրամադրություններով:

Գալով արդեն անուն ձեռք բերած հեղինակներին՝ Գորկուն, Անդրեևին, Կուպրինին, Իսահակյանը գրախոսականում գտնում է, որ 1907 թիվը առավել բարյացակամ է գտնվել Լենինի Անդրեևի հանդեպ. գրական շրջաններում մեծ ազմուկ հանեցին նրա «Հուդա Իսկարովտացին», «Մարդու կյանքը», «Մթին» պատմվածքները:

Կուպրինի երկերից, որպես առավել հաջողվածները, Իսահակյանն անդրադառնում է «Զմրուխտ» և «Գամբրինուս» պատմվածքներին: Միաժամանակ նա գրում է, որ իրեն դուր չի գալիս Գորկու «Մայրը» վեպը, տակավին չպարզաբանելով իր գնահատականը, բայց երկվույթին, նրան՝ որպես քնարերգու-նոմանտիկ ստեղծագործողի, թերևս խորթ էր «Մայրը» վեպի ընդգծված ռեալիզմը:

Իսահակյանի՝ պոեզիային վերաբերող մեկնաբանություններից երևում է, որ տարվա բանաստեղծական նորույթները մեծապես հետաքրքրել են նրան և պարզեցել բարձր արվեստի հետ շփման երջանիկ պահեր: Գրչի մի շարժումով, հակիրճ բայց դիպուկ, նա գծում է ժամանակակից պոետների բնութագրերը:

Ահա «հին ու նոր մոդերնիստների գլխավոր ոգին»՝ Կոնստանտին Բալմոնտը, որ «մըշտական թարմ և անթառամ փառք է վայելում»: «...Սքանչելի են նրա լիրիկական ոտանավորները, — գրում է Իսահակյանը, — սահուն և շողշողուն լեզվով. նա լույս բնծայեց այս տարի երկու նոր ժողովածուներ՝ «Птицы в воздухе» և «Жар птица»: Իսահակյանը սիրում էր Բալմոնտի դասական հնչեղություն ունեցող բանաստեղծական լեզուն, նրա երաժշտական վիրտուոզությունը: Ահա և Իվան Բունինը, որ «...տվեց մի քանի սիրուն բանաստեղծություններ և երկու պատմվածք «Астма» և «У истока дней»:

Իսահակյանը գտնում է, որ անցած բանաստեղծական տարում «հաջողություն» ունեցան բոլորովին նոր բանաստեղծները՝ Ա. Բլոկը, որ ծայրահեղ իմպրեսիոնիստ է, երևեցավ «Զլունն դիմակ» («Снежная маска») ժողովածուով, Վ. Իվանովը, որ գործ է ածում հին ստիլ՝ իր «էրոս» («Эрос») ժողովածուով...: Սա Բլոկի անվան առաջին հիշատակումն է Իսահակյանի և ընդհանրապես հայ գրողի կողմից: «Զլունն դիմակը» Բլոկի երկրորդ գիրքն էր, որ լույս էր տեսել 1907 թվականի ապրիլին, Պետերբուրգում: Գուցե և հենց այս գրքով էլ սկսվել է Իսահակյանի ծանոթությունը Բլոկի պոեզիային (այստեղից էլ՝ Բլոկին բոլորովին նոր բանաստեղծներից մեկը համարելը): «Զլունն դիմակը» պոեզիայում Բլոկի նախասիրած «քնարական տարբերքի» և «անորսալի կրաժառուցյան» («Лирическая стихия» և «Темная музыка» Բլոկի խոսքերն են—Ա. Ի.) միասնության լավագույն արտահայտությունն էր: Ռուսական մեծ բանաստեղծը քնարական այս սքանչելի շարքը նվիրել էր դժբախտուհի Ն. Ն. Վոլոխովային հետևյալ բնծայականով. «Посвящам эти стихи ТЕБЕ, высокая женщина в черном, с глазами крылатыми и влюбленными в огни и мглу моего снежного города»:

Կրթում արտացոլվել են պետերբուրգյան ձմռան գիշերվա թատերական մի դիմակահանդեսի հետ կապված երիտասարդ բանաստեղծի կրթոտ ու ֆանտաստիկ տպավորությունները (այստեղից էլ՝ Իսահակյանի բնորոշումը—«ծայրահեղ իմպրեսիոնիստ»): «Զլունն դիմակը» հանդիսացավ Բլոկի «անհատական լիրիկայի» վերջին գիրքը, որից հետո սկսվում է նրա պոեզիայի նոր՝ «քաղաքացիական» հնչեղություն ունեցող շրջանը:

«... Ամենից մեծ ազմուկ հանեց պոետական աշխարհում Սերգեյ Գորոդեցկին, գրում է Իսահակյանը, — իր «Яр» (գարնան աստված) և «Перун» (սլավոնների աստվածը), ժողովածուներով»: Գորոդեցկու ինքնատիպ արվեստի մասին Իսահակյանը նկատում է. «Այս ինքնուրույն տաղանդը գործ է ածում սլավոնական հին ոճերը կատարելագործված մի ստիլով, որը շատ ճաճանչազեղ է և խրթին, կարծեք լսում եք մի հեթանոս Սարմատի, որը ուժեղ լնզվով խոսում է և կյանքն ու արևը վայելում»: Սակայն Գորոդեցկին Իսահակյանի «պոետ» չէր և նրա մասին հետագա իր գրություններում նա լուր է:

Հետաքրքիր է Իսահակյանի կարծիքը այդ տարիների Բրյուսովի մասին, որին նա անվանում է «գեորգանցանցայես մոդեռնիստ», իսկ այդ ժամանակաշրջանում նրա հրատարակած «Ընդհիմն ասանցքը» գրքի և «Հուր հրեշտակ» («Огненный ангел») վեպի մասին նկատում է. «որքան որ ոճով կատարյալ են, բայց նույնքան էլ սառն են, մտածված, առանց ոգևորության»:

Պետք է ասել, որ Իսահակյանի կարծիքն ավելի շուտ վերաբերվում էր Բրյուսովի մոդեռնիստական որոնումներին, որոնք նրա սրտովը չէին, քան թե «Հուր հրեշտակ» վեպին:

Գարսակզրի ռուս բանաստեղծներին Իսահակյանի տված բնութագրումներից հստակ երեկում է, որ նրա համակրանքը պոեզիայի դասական ավանդները շարունակող ստեղծա-

դրոժողների կողմն է, որոնք հետագայում կազմեցին XX դարի մինչհոկտեմբերյան շրջանի ուսական պեդագոգի փառքը: Եվ, դրա հետ մեկտեղ, աներկբայորեն երևում են նրա՝ իսկական ժողովրդական բանաստեղծի, հայացքները. նա չի թաքցնում իր հակակրանքը թվարկված բանաստեղծների որոշ գործերում ի հայտ եկած մոդեռնիստական-արհեստական ոճերի, կեղծ ժողովրդական զարդարումների, եկեղեցա-սլավոնական սեփեթիանների ու անմիտ «խորիմաստությունների» հանդեպ: Պետք է նշել, որ ուսու առաջադեմ քննադատական միտքը ևս իր հերթին ժամանակին անդրադարձել է վերոհիշյալ բանաստեղծների՝ Իսահակյանի նկատած «աքիլոսյան զարչապարին»:

Իսահակյանի հորվածը մեկ անգամ ևս վկայում է, որ իր գեղագիտական հայացքներում նույնպես հավատարիմ էր արվեստի ժողովրդայնության ու դեմոկրատականության իր դավանած սկզբունքներին: Իսահակյանն առաջիններից մեկն էր, որ հայ քննադատության ասպարեզում խոսք է բացել դարասկզբի ուսու գրականության, նոր գրողների ու նրանց գործերի վերաբերյալ:

Գրասկզբի ուսու գրականության նկատմամբ Իսահակյանի հետաքրքրությունները շրջանը, բնական է, չի սահմանափակվում սուկ 1907 թվականի գրական «հունձքով»: Նրան հետաքրքրում է նաև, թե ժամանակակից գրողները ինչ նոր բարեփոխություններ էին ուզում կատարել արվեստում և գրական կյանքում: Այս կալվածքությանը Իսահակյանը նկատում է, որ նոր երկերին համապատասխան, վերափոխվում են, իսկ հաճախ և ծնունդ առնում գրական-գեղարվեստական նոր պարբերականներ ու ժողովածուներ. «Ռուս տրամադրության արտահայտությունները,— գրում է Իսահակյանը,— այլևս չէին» «Мир божий» կամ «Русское богатство» և այլ ծանոթ հաստ ամսագրերը, այլ «Весы», «Перевал», «Золотое руно», «Шиповник»...»:

Այս նորաստեղծ գրական-գեղարվեստական ժողովածուներից մեկին «Շիպովնիկ» այմանախին (գիրք հինգերորդ, ՍՊՔ, 1908) է վերաբերվում Իսահակյանի երկրորդ հորված-գրախոսականը, որը լույս տեսավ Թիֆլիսի հայկական «Ջանգակ» օրաթերթում (1908, հուլիսի 24, 25, №, № 15, 16): Այն սկսվում է Մ. Գորկու «Ջանիե» մատենաշարի ժողովածուների հիշատակումով. «1904 թվից Մաքսիմ Գորկու նախածեղծությանը սկսվեց հրատարակվել «Знание» հայտնի ժողովածուների շարքը: Նոր գրականագետները և հեղափոխական շրջանի գեղարվեստական գրողները բոլորն ալստեղ էին աշխատակցում: «Ջանիե» ժողովածուները (1904—1913 թթ.՝ 40 գիրք) մեծ դեր խաղացին Ռուսաստանի հասարակական կյանքում: Նրանցում տպագրված շատ ստեղծագործություններ տոգորված էին ընդդիմադրական գաղափարներով, ունեին առաջադեմ ու դեմոկրատական ուղղվածություն:

«Ջանիե»-ում են առաջին անգամ տպագրվել այնպիսի նշանավոր գործեր, ինչպիսիք են Մ. Գորկու «Մայրը», «Մարդը», «Մատվեյ Կոժեմյակինը», Ա. Զինովի «Բալենու այգին», Լ. Անդրեևի «Կարմիր ծիծաղը», «Հուդա Իսկարովացին», Ա. Կուլյրինի «Մենամարտը», Վ. Վերեսևսկի «Պատերազմում» և ուրիշ շատ գործեր:

«Ջանիե»-ն ծաղկում ապրեց մինչհեղափոխական և հեղափոխության շրջանում: Ժիշտ է, 1905—1907 թթ. հեղափոխության պարտությունից հետո էլ ժողովածուն շարունակվում էր հրատարակվել, բայց նրա ձայնն այլևս չուներ նախկին հնչելությունն ու հանդեմությունը և, դրանից բացի, նրա ընթերցողների որոշակի մասը, մասնավոր լիբերալ մտավորականությունը, տեղատվության շրջանում որոնում էր միտակ ու դեկադենսական մտքեր ու տրամադրություններ արտահայտող հանգեսներ և ժողովածուներ:

«Շիպովնիկ» գրական-գեղարվեստական այմանախի (1907—1917 թթ. ունեցել է 26 գիրք) հիմնական հեղինակների թվում էին Ա. Բելին, Ա. Բլուկը, Կ. Բալմոնտը, Վ. Բրյուսովը: Նրա աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էր նաև Լեոնիդ Անդրեևը (1907—1909 թթ. եղել է նաև խմբագիրը):

Այմանախի լավագույն համարներից մեկն էր հինգերորդ գիրքը (1908): Պատահական չէ, որ հենց այդ թողարկումն էլ գրավել էր Իսահակյանի ուշադրությունը: Գիրքը լույս էր տեսել 1908 թվականի մայիսի 6-ին, իր ժամանակի համար անսովոր մեծ տպաքանակով՝ 23 հազար օրինակ և ակնթարթորեն սպառվել: Ժողովածուի արտակարգ հաջողության պատճառը Լեոնիդ Անդրեևի «Ճոթը կախվածների պատմությունը» պատմվածքն էր: Այն մի ակնթարթում դարձավ ուսու ընթերցողի ամենասիրելի երկերից մեկը: Լ. Անդրեևի պատմվածքը 1908—1918 թթ. ընթացքում ունեցավ ուսուերեն 28 առանձին հրատարակություն: 1909-ին այն թարգմանվեց նաև հայերեն:

Մարքսիստական քննադատությունը «Ճոթը կախվածների պատմությունը» համարեց կրթությունը՝ հակահեղափոխական տեղորի ու մահապատիժների դեմ, իսկ սահարյուրակային մահ

մուլը հեղինակին մեղադրեց հեղափոխության հերոսների հիշատակին «ենթորդներ ձեռնելու» մեջ (տես «Братский листок» 1909, № 167):

Հայ քննադատության մեջ Անդրեեի այս պատմվածքի մասին առաջինը գրեց Իսահակյանը:

Անդրեեի պատմվածքի փաստագրական հիմքը հեղափոխական «մարտական թուղթիկ» շոկատի անդամների հետ ցարական իշխանությունների՝ արյունոտ հաշվհարդարի պատմությունն էր, երբ մի խումբ հեղափոխականներ էլեռ պրովոկատոր Եվտ Ազեֆի մատնությանը ընկան ոստիկանության ձեռքը՝ արդարադատության մինիստր Շչեպուլովիտովի դեմ նախապատրաստվող մահափորձի համար: Ցարական զինվորական տրիբունալի որոշմամբ այդ խմբից յոթ հոգի 1908 թվականի փետրվարի 7-ին կախաղան բարձրացվեցին: Ահա այդ ոճիրի դեմ էր գրիչ բարձրացնում և լեռնիզ Անդրեեը: Նա նկարագրում է մահապարտների կյանքի վերջին օրը՝ մի ցերեկ և մի գիշեր: Իսահակյանը Անդրեեի նախընտրած իրավիճակի մասին գրում է. «Թովանդակությունը այստեղ երկրորդական տեղ է բռնում: Գլխավոր և կարգինայ հարցը հոգեբանական, նրբին, խոր վերլուծությունն է. հոգեկան այն դրության՝ մահվան նախօրյակի, մահվան բուպինի զգացածների, որ ոչ թե միայն դժվար է արտահայտել, այլև համարյա անկարելի է, որովհետև այդ դրությունը չի ենթարկվում ոչ մի փորձառության»: Այս ասպարեզում՝ մարդու անսովոր, խորը դրամատիզմով հագեցած ապրումների հոգեբանական վերլուծությունները արվեստի մեջ, թերևս, Անդրեեը չունի իրեն հավասարը, ընդգծում է Իսահակյանը:

Հարկ է նշել 1897—1902 թթ. գրված Իսահակյանի «Մի շաբաթ մահապարտի հետ» պատմվածքը, որի հիմքում 1896—1897 թթ. Երևանի բանտում բանաստեղծի անցկացրած օրերի հուշն էր: Մարդու հոգեկան վիճակը օրհասի դիմաց, — սա էր Իսահակյանի պատմվածքի առանցքը, երբ կարծես խախտվում է կյանքի ու մահվան միջև ընկած սահմանը, երբ իրական սկսում են ընկալել որպես անիրական, երբ մարդն ընկնում է յուրատեսակ ինքնամոռացության, ցնորքների գիրկը: «Ինչքան դյուրահավատ է օրհասին դրացի մարդը, — գրում է Իսահակյանը, — երկիսայից ավելի դյուրահավատ. պատահարտ արտասանած մի խոսք նրանց էամ վերստեղծում է, կամ ոչնչացնում. սեփական դատողություն չունեն և երբեք իրականի հիշտ ըմբռնում»:

Իհարկե, Իսահակյանի հերոսը՝ ակամա հանցագործ ու մարդասպան դարձած մահապարտ Սեդրակը, պրիմիտիվ ու միամիտ անձնավորություն էր, իր մտավոր զարգացմամբ էլ շատ հեռու Անդրեեի պատկերած մահապարտ հեղափոխականներից: Թերևս նա իր քնազդական լուռնվածքով հիշեցնում է յոթնյակից քրեական հանցագործ էստոնացի Յանսոնին, նույնպես անգրագետ ու մութ մի մարդու, սակայն թե՛ Իսահակյանը և թե՛ Անդրեեի կարծես ցանկանում են շեշտել այն միտքը, որ ինչքան էլ պրիմիտիվ ու միամիտ լինի մարդ, միևնույն է, էրա մեջ զորեղ է ապրելու կամքը և այն ոչ ոք իրավունք չունի խլելու: Սեդրակը արժանանում է Իսահակյանի խոր կարեկցանքին. հաճախ վերջին անգամ, մահապատժից առաջ, փաթաթվում, հրածնշտ է տալիս Իսահակյանին. «Մեռնող մարդը կառչել է ապրող մարդուն... ապրողի հետ ինքն էլ կապիս», — այդպիսի մի միտք անցավ զլխոսով... Բաժանեցին ինձ նրանից. ես նայեցի նրա աչքերին. երբք սարսափը այդպես մարմնացած չէի տեսել: Այդ աչքերը նայում էին միայն ինձ, միայն ինձից փրկություն հուսալով, մի անհույս հուսով նայում էին ինձ: Ախ, եթե հնար ունենայի, կխորտակեի ամեն վճիռ ու շղթա, կգրկեի ու կտանեի նրան, ուր որ անմատույց էր և ամենից ապահով»: Մարդկային նույնպիսի կարեկցանք են առաջացնում նաև Անդրեեի մահապարտները:

Մենք հիշատակեցինք Իսահակյանի վաղ շրջանի այս պատմվածքը, ցույց տալու համար, որ Անդրեեի շոշափած թեման (Իհարկե, անհամեմատ ավելի բարձր քաղաքացիական հնչեղություն) հոգեբանական տեսանկյունից ծանոթ էր Իսահակյանին և ժամանակին արտացոլվել էր նրա ստեղծագործության մեջ: Անդրեեի պատմվածքը չէր կարող անարժապանք մնալ Իսահակյանի հոգում: Զմոռանալք, որ Իսահակյանը ևս, դեռ 1906-ին, իր արձակում պատկերել էր հեղափոխական Շաքրո Վախիշվիլու հերոսական կերպարը, որին ցարական ոստիկանությունը մահապատժի է ենթարկում 1905 թ.: Եիշտ է, Իսահակյանի քնարա-փիլիսոփայական արձակն իր ռեճով շատ է տարբերվում Անդրեեի անողոք ունախտական արձակից, սակայն նրան հայտնի էին նման պատմվածքի ստեղծման դժվարությունները և այդ առումով նրան հիացմունք էր պատճառում դժվարագույն նյութի հաղթահարման Անդրեեի կարողությունը, մարդկային հոգու լարիերիթոսները թափանցելու նրա հազվագյուտ ձիրքը: Երբ տաղանդի առանձնակի հատկություններ, որը միշտ տրամադիր է հիվանդագին, աննորմալ, անսովոր ապրումները վերլուծելու, Անդրեեի երևակայությունը այս գրվածքի մեջ, մեզ թվում է, կարողացել է մասամբ լու-

սավորել այն անթափանց խավարը, որ տիրում է մարդկային հոգում իրական, անխուսափելի մահվան առաջ»:

Ժամանակի առաջադեմ քննադատությունը որոշ դեպքերում մեղադրել է Անդրեևին իր պատկերած հեղափոխականներին ապապատմական դուրս բերելու մեջ, իբր նրանք դուրս են ընկած իրականությունից, շունեն անցյալ և այլն և այլն:

Իսահակյանը համամիտ չէր այդ տեսակետներին: Ըստ նրա, Անդրեևը արվեստի մեծ ուժով պատկերելով իր հերոսներին մահվանից ընդամենը մի քայլի վրա, տարբարություն է անցյալի և իրականի՝ ժամանակի հասկացողությունը, և դա նրա նվաճումն է, քանի որ Անդրեևի երկի հերոսներին ժամանակը ապագա շունի, իսկ նրանց ներկա իրադրության ժամանակի և տարածության յուրաքանչյուր խորանարդիկը նույնն է՝ ինչ անսահմանությունը: Այս է նրանց ժամանակի ընթացքը. «Նրանք մեռնելու են անպայման մի օր հետո, բայց դեռ քնում են, խոսում են, ուտում են. կախաղան գնալիս դիտում են ճանապարհը, նկատում են, որ լապտերը մուր է արձակում, մրսում են և ծածկվում, իրար են դիպչում և ներողություն խնդրում. կրկնակոշիկի մեկը կորել է ձյան մեջ, որոնում են հենց կախաղանի մոտ, այս ամենը մեքենայաբար, որ սակայն մեզ համար մնում է միշտ գերբնական և գերմարդկային: Նրանց ուղեղը այնպիսի դրություն մեջ է գործում, որ միանգամայն մեր մտածողության սահմաններից դուրս է և կարծեք այդ պրոբլեմատիկ դրությամբ նրանք ապրում են ժամանակից ու տարածությունից դուրս մի տրանսցենդենտալ (վերազնացական—Ա. Ի.) աշխարհում, բայց և ապրում են...»:

Որպես հմուտ գեղագետ, Իսահակյանն իր ուշադրությունը սևեռել էր երկի հենց այս հոգեբանական բարդ իրավիճակի վրա: Այս իրավիճակում գործող անդրեևյան կերպարներն այն աստիճան ամբողջական են և մասնիկն են ընթացող ժամանակի, որ նրանց դեպի անցյալը տանելը կխախտեր երկի ամբողջական ընթացքը, ավելին՝ թույլ էր տա Անդրեևին իրականացնել իր նպատակը: Իր գեղարվեստական մտածողությամբ նա առաջ էր անցնել ժամանակից և այդ նորն էր, որ որոշ քննադատներ չէին կարողացել նկատել, այնինչ հենց դա էր գնահատելին Իսահակյանի համար:

Իսահակյանի գրադարանում պահպանվել է Լ. Անդրեևի «Յոթը կախվածների պատմությունը» գրքի 1909 թ. հրատարակությունը: Լ. Անդրեևի հանդուգն երկին Իսահակյանի տված բարձր գնահատականը լայն արձագանք գտավ հայ հասարակության առաջադեմ շրջաններում: Մեկ անգամ ևս, թող որ որպես քննադատ, Իսահակյանը երևաց տեղատվության ծանր ժամանակներում որպես առաջադեմ ու հումանիստ մտածող:

1908 թվականի օգոստոսի 22-ին Քիֆլիսում հրատարակվող «Զանգակ» օրաթերթում (№ 39) լույս է տեսնում Իսահակյանի երրորդ գրախոսականը, որը վերաբերվում էր «Земля»՝ գրական ամսանախի առաջին գրքին: Գրական այս ամսանախը լույս էր ընծայում «Մոսկովյան գրողների գրահրատարակությունը» (1908—1917 թթ. ընթացքում լույս է տեսել 20 գիրք):

«Զեմլյան» մրցում էր ոչ միայն «Զևանիեի», այլև անկումային շրջանում մեծ աղմուկ հանած «Շիպովիեի» ամսանախի հետ: Սակայն, ի տարբերություն «Զևանիեի»-ի ժողովածուների, «Զեմլյան» նպատակ ուներ «ազատել» մարդուն հասարակական հոգսերից և վերադարձնել նրան «հողին», այսինքն՝ հավիտենական նախահիմքերին: Այս ամսախը քարոզում էր ծայրահեղ անհատապաշտություն, ազատագրումն բարոյական նորմաներից: «Զեմլյայի» հիմնական հեղինակներն էին Մ. Արցիբաշևը, Վ. Վիննիչենկոն, Յ. Սուլզոբը, Ե. Չիրիկովը, Ս. Ցուլկեիչը, Ն. Կրաչեննիկովը՝ տաղանդից ոչ զուրկ ստեղծագործողներ, որոնց հետաքրքրությունների ոլորտը, սակայն, մոդայիկ, այսպես կոչված՝ «սեռի պրոբլեմն» էր, նրանց երկերի հիմնական բովանդակությունն էր անհատի ինտիմ կյանքը, նրա էրոտիկ ապրումներն ու իղձերը:

«Զեմլյայի» որոշ համարներում, ժամանակ առ ժամանակ, տպագրվում էին նաև այնպիսի անվանի ստեղծագործողներ, որպիսիք են Ա. Կուլչիկը (այստեղ է տպագրվել նրա «Նոնաբարե ապարանջան» վիպակը), Լ. Անդրեևը, Ի. Բունինը, Ա. Սերաֆիմովիչը և ուրիշներ:

Իսահակյանի գրախոսած «Զեմլյայի» առաջին գիրքը կարելի է համարել այդ ամսանախի հետաքրքիր գրքերից մեկը, թեպետ այն շատ խայտարեղեմ էր իր թեմատիկայով:

Իսահակյանն իրավացիորեն նկատում է, որ ամսանախում Ա. Կուլչիկի «Սուլամիթի»

¹ «Земля», сборник первый, «Московского книгоиздательства писателей», М., 1908.

նման բարձրորակ երկի կողքին տեղ էին գտել նաև «ղվարճալի ընթերցանութիան» նմուշներ՝ ֆրանսիացի հեղինակ Մարսել Եվրոի «Եռաշաղկի մանուկների արշավանքը», հրեա արձակագիր Շոլամ Աշի «Մեղքը»: Այս գրվածքների հիմքում ընկած էին միջնադարյան առասպելներ, որոնք տողորված էին մոայլ սիմվոլիկայով, վերացական դատողություններով և զուրկ էին սոցիալական հարցերից: Նման երկերի ուռճացած դրամատիզմը, միստիկական պատկերները, ինչ-որ տեղ արձագանքում էին ժամանակի դեկադենսական ճաշակներին:

Իսահակյանին չէր հուզել ո՛չ բանաստեղծ Ալեքսանդր Չյոդորովի «Հանգույցը» և ո՛չ էլ Ա. Սերաֆիմովիչի «Աղշիկը» պատմվածքը, վերջինիս մասին նկատում է. «Մի սրտառու պատմվածք է, կարդացվում է սիրով, բայց մի առանձին արժեք ունեցող բան չէ»:

Սակայն առավել պահանջկոտ էր Իսահակյանը Լ. Անդրեևի նման տաղանդի հանդեպ: Այնպես ինչպես հրատարակված էր նրա «Գազանի անձեքը» պատմվածքը, որը, սակայն, Իսահակյանը սկզբունքորեն չի ընդունում. «Անդրեևի «Գազանի անձեքը», ի՞նչ սեռի գրվածք է, դժվար է որոշելը, բայց հարցը դա չէ, այլ այն, թե դրանով ի՞նչ է ուղում ասել Անդրեևը: Ի՞նչ որ զարմանալի տաղանդ է Անդրեևը. հանկարծ մի խորին գրվածքի հետ արտադրում է միանգամայն իրեն պատիվ չբերող բան.— այս գրվածքը վերջին տեսակիցն է, անորոշ, անհեթեթ, մի սուամբուր, հիվանդագին գառանցանքներ, զուրկ որևէ գեղարվեստական արժեքից: Տոլստոյը այս և սրա նման գրվածքների մասին ասել է, թե Անդրեևը ուղում է ընթերցողին վախեցնել, այնինչ միայն ձանձրացնել կարող է»¹:

Այնպես ինչպես միակ գործը, որ արժանացել է Իսահակյանի համակրանքին, Ա. Կուպրինի «Սուլամիթ» վիպակն է: Իսահակյանը բնութագրում է Կուպրինին, որպես մի արձակագիր, որը խիստ ազդված էր Տոլստոյից, Տուրգենևից ու Չեխովից, իսկ նրա «Մենամարտ» վիպակի մասին գրում է. «...կարծեք Տոլստոյի նախկին վեպերի շարունակությունն է՞ կարդում»: Նույն տեղում, հաստատելու համար իր գնահատականը, նա մեջ է բերում Տոլստոյի կարծիքը. «Ե միջի այլոց, Տոլստոյը նրան շա՛տ է հավանում և ուրիշ կերպ չի կոչում նրան, այլ միայն «օֆիցեր Կուպրին»:

Կուպրինի ոճը Իսահակյանը գտնում է պարզ, որոշ ու սեղմ, իսկ նրա՝ ստեղծագործողի սկզբունքները՝ «առողջ ու զեթ մողերն հիվանդություններին»:

«Սուլամիթը» գրավել էր Իսահակյանի ուշադրությունը, քանի որ դեկադենսի ժամանակաշրջանին մոդայիկ «սեռի պրոբլեմը» քննող ծով գրականության մեջ (ըստ որում, հենց «Չեխով» այնպես ինչպես հետագայում դարձավ նման գրականության հիմնական զատագույններից մեկը) այն կարծես վերածնունդ է բարձր ու մաքուր սիրո զգացմունքը: Այս առիթով Իսահակյանը գրում է. «...Չափազանց գեղարվեստական գրվածքում սերը՝ հավերժական այս ձգտումը երկու սեռերի միջև, ներկայանում է այնպես պլաստիկ, բանաստեղծական և միանգամայն բնական, որ զգում ես խորագին՝ սիրո սրբազան ուժը ազնվացնող և ներդաշնակ, առողջ և ստեղծագործող»:

... Այս շքի գրվածքի մեջ հավասարաշափ պաշտվում է և՛ մարդկային հոգին, և՛ մարդկային մարմինը. հոգու և մարմնի այս լքնաղ ներդաշնակությամբ հնչում է այս երկի ամեն մի տողը»:

Վիպակի նյութը՝ Հին եբրայական քնարերգության զուլգործոց «Երգ-երգոցից» վերցրած Սուլամիթի և Սողոմոն թագավորի սիրո պատմությունը վաղ երիտասարդական տարիներից բանաստեղծի սիրելի երկերից էր: Դեռևս տասնիննամյա Իսահակյանը գրել է իր «Էփրատակարանում»՝ 1894 թվականի դեկտեմբերի 31-ին. «Ըստ մի օրատեսուր պիտի ունենամ հատուկ իմ հոգու տատանմունքների համար. դրանցից պիտի ես կազմեմ իմ հերոսին: Դ՛Ամիչիսի «Սիրտը» գիրքը, ինչպես և Դավթի Սաղմոսը կամ Սողոմոնի Երգ-երգոցը կամ մեր Նարեկը, որոնք մի-մի օրինակներ են իմ գրվածքի համար ծառայելու»:

Իսկ իր ժողովուրդներից մեկում Իսահակյանը գրել է, որ համաշխարհային սիրային քնարերգության լավագույն տողերը դա «Երգ երգոցի» Սոմնացու (կամ Սուլամիթի) գեղեցկությունները գովերգող տողերն են: Իսահակյանը միշտ հոգու խորքում փափայել է այդ առասպելը Իր հերթին, Իսահակյանը «Աստվածաշնչի» ոճից օգտվել է իր «Էփիթը» ստեղծելիս: «Ուտար Կարո» անավարտ վեպում, երկրորդ հիմնական հերոսին՝ Հարուֆին վերաբերող գլուխներում մենք հանդիպում ենք և՛ Սողոմոն իմաստունին (որը, որպես խորհրդատու, երևում է Հարուֆին երազում) և՛ Սուլամիթին (որին Իսահակյանը հայացի կոչում է Սոմնացի): Սոմնացին սիրո և կնոջ վերաբերյալ Հարուֆի իդեալական ձգտումների մարմնա-

¹ Իսահակյանը փոքր-ինչ շեղվել է. Տոլստոյը հետևյալն է ասել. «Он пугает, а мне не страшно»:

ցումն էր, նրա եթերային և միակ սերը, որ այցի է գալիս Հարութին անուրջների մեջ և ամեն անգամ ցնորում նրան:

Իհարկե, Իսահակյանի վեպի և Կուպրինի վիպակի միջև շկա ընդհանուր սյուժետային գիծ կամ մոտիվ: Կուպրինը փոքր-ինչ ոճավորել է հին հրեական լեգենդը, դարձրել բելետրիստիկայի նյութ. նրա Սուլամիթն ու Սողոմոնը դարձել են գործող կերպարներ, այնինչ Իսահակյանը նրանց, որպես դիցարանական սիմվոլների, օգնությամբ փորձում է բացահայտել իր հերոսի ներաշխարհը, նրանք հանդես են գալիս «Ուստա Կարոյում» անուրջի, տեսիլքի ձևով: Սակայն, Կուպրինի գրվածքը զուցե և ինչ-որ շափով օգնել է Իսահակյանին՝ տեսնել այդ լեգենդի հերոսներին աճելի հյուսիսում ու կենսալից: Պատահական չէ, որ Կուպրինի երգած Սուլամիթի և Սողոմոնի սիրո պատմությունը մեկնաբանելիս Իսահակյանը խանդավառված գրել է. «...այնուհետև սկսվում է «Սրգ երգոցի» լիրիզմը. ամբողջ երեսներ գրված են անման և անմահ «Սրգ երգոցի» տողերով»: Իսահակյանին զմայլել էր Կուպրինի վարպետությունը՝ հազարամյակների միջից երևացող իրականության կենդանի վերարտադրման կարողությունը, լեգենդար անձերին մարդկային հավաստի կրթերով օժտելու ձիրքը, նյութի մեջ խորամուխ լինելու ունակությունը:

Վիպակից մի շարք հատվածներ Իսահակյանն իր թարգմանությամբ մեջ է բերում գրախոսականում հայերեն՝ իր թարգմանությամբ, որոնք շափազանց բանաստեղծական են ու միանգամայն համահունչ բնագրի ուսմանտիկ ոճին: Ակամա փսսոսում ես, որ Իսահակյանը ամբողջությամբ չի թարգմանել վիպակը, մասնավոր, որ գրախոսականի վերջում հետևյալ առաջարկությունն է անում. «Այս սքանչելի գրվածքը, իբրև նմուշ իսկական գեղարվեստի, խորհուրդ կտանք անպատճառ թարգմանել»:

Իսահակյանին խորապես մոտ էր Կուպրինի երկի սիրո հավիտենականության գաղափարը: Բանաստեղծի «Հավերժական սեր» պոեմը, որ գրված է 1914-ին, թերևս սիրո անվախենականության իր գաղափարով նույնպես առնչվում է «Սուլամիթին»: Սողոմոնը Սուլամիթից հետո հավատարիմ է մնում նրա սիրուն այնպես, ինչպես և Իսահակյանի էլ-Սամանը իր բամբիջին:

Դարասկզբի ուս գրականության մասին Իսահակյանի հոդվածներն ուսումնասիրելիս նկատվում է մի ընդհանուր օրինաչափություն. գրական որևէ նոր ուղղություն և այն բնորոշող գրական ժողովածուն զենելիս Իսահակյանն առանձնացնում է տվյալ գրական հոսանքի առավել ցայտուն գծերն համախմբող և այդ ուղղությունը առավել բնորոշող ստեղծագործությունը, ինչպես, ասենք, Լեոնիդ Անգրենի «Յոթ կախվածների պատմությունը» կամ Կուպրինի «Սուլամիթը» և դիտում այն ոչ թե սոսկ ուս գրականության համակարգի մեջ, այլև փորձում է նրա միջոցով պատկերել նաև ժամանակաշրջանի՝ տվյալ հատվածի հասարակական տրամադրություններն ու հոգեկան պահանջները: Իսկ երկը մեկնաբանելիս ի հայտ է բերում նաև իր աշխարհայեցողությանը բնորոշ սկզբունքներ, քանի որ նրա մոտեցումը նյութին ու հեղինակին, նրա քննադատական մեթոդը ինչ-որ շափով նաև իր անհատականության արտացոլումն է՝ ինքնաբացահայտումը: Այսպիսին է Իսահակյանը թե՛ 1907 թվականի ուս գրականությանը, թե՛ «Շիպովնիկ» և «Ջեմլյա» գրական ժողովածուներին, թե՛ համարյա նույն ժամանակաշրջանում գրված, Կնուտ Համսունի «Պանը» և «Վիկտորյա» վեպերին վերաբերող գրախոսականներում: Սրանք մեզ հնարավորություն են ընձեռնում ծանոթանալ նրա փիլիսոփայական հայացքներին և գեղարվեստական սկզբունքներին:

А. В. ИСААКЯН — Русская литература начала века в оценке Ав. Исаакяна. — В работе на основе литературно-критических статей о ряде произведений русской беллетристики начала века, написанных Исаакяном в 1908 г. и опубликованных в армянских газетах «Втак» и «Зангак», рассматриваются литературные, эстетические взгляды автора. Исаакян в основном анализирует произведения, вышедшие в свет в 1907 г., а также две книги популярных в свое время литературно-художественного альманаха «Шиповник» (книга пятая, СПб, 1908) и сборника «Земля» (№ 1, Москва, 1908), в частности, произведения таких писателей, как Л. Андреев, А. Куприн, А. Блок, В. Брюсов, К. Бальмонт. Общее идейно-критическое содержание этих статей показывает, что и здесь Исаакян является поборником передовых демократических идей и отстаивает принципы народности литературы.